Առողջապահության նախարարություն
Հասցե՝ Երեւան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3

Դիմող՝ ՀՀ քաղաքացի Մերի Սերոբյան Մխիթարի
/հասցե՝ ք. Երևան, Մ. Չայլախյան փ., 69 շենք, բնակարան 23,
հեռ.՝ 041 105251
էլ. հասցե՝ maryserobyan23@gmail.com,
նույնականացման քարտի տվյալներ՝ 010593622/

ԴԻՄՈՒՄ

Ղեկավարվելով Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 6-րդ, անհրաժեշտության դեպքում նաև՝ Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 15-րդ, 16-րդ, 33-րդ հոդվածներով՝
խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալ հարցերի վերաբերյալ.

Անձը ցանկանում է հիմնել ընկերություն, որը լինելու է սապբորդինգի դպրոց: Սովորեցնելու են մարդկանց սապ վարել, կազմակերպելու սպորտային միջոցառումներ Երևանին մոտիկ ջրավազաններում (եթե հնարավոր է՝ նաև Երևանի ջրավազաններում): Ընկերության նպատակներն են լինելու սպորտի, առողջ ապրելակերպի քարոզչությունը, Հայաստանում տուրիզմի զարգացումը:

1. Ի՞նչ պահանջներ է անհրաժեշտ պահպանել մարդկանց՝ ջուր դուրս գալու, նրանց ուղեկցելու համար, օրինակ՝ ինստրուկտաժ, փրկարարների առկայություն, համապատասխան փրկարար ժիլետներ և այլն: Խնդրում եմ նաև նշել այն իրավական ակտերը, որոնք կարգավորում են այս հարաբերությունները, որտեղ ամրագրված են այդ պահանջները:

2. Երևանի ո՞ր ջրավազաններում է հնարավոր անց կացնել նմանատիպ սպորտային միջոցառումներ՝ սապբորդինգ: Արդյո՞ք այդ ջրավազաններում նաև թույլատրելի է լողալ: Խնդրում եմ նաև նշել այն իրավական ակտերը, որոնք կարգավորում են այս հարաբերությունները:

3. Ի՞նչ պետական, տեղական ինքնակառավարման մարմինների հետ է անհրաժեշտ համաձայնեցնել այդպիսի միջոցառումների անց կացումը:

Ընկերության հիմնադիրը իր կողմից պատրաստ է տրամադրված ջրամբավազանի տարածքում իրականացնել գծանշման աշխատանքներ, ջրավազանի հատակը մաքրել կամ աղբահանության շաբաթօրյակ կազմակերպել:

Հարգանքով՝
Մերի Սերոբյան
05.05.2023թ.

10 Մայիս 2023թ
Մերի Սերոբյան

ՀՀ Առողջապահության նախարարություն
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
№ 17/1/2
«10» 05 2023 թ.